

# ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

### ԼՅՈՒԴԿԻԳ ՎԱՐՂԱՆՅԱՆ

Քաղաքականությունն ուսումնասիրող գիտությունների համակարգը շատ բազմազան է և բարդ: Քաղաքական գիտելիքի համաշխարհային ավանդությունը սովորաբար ընդունված է տարբերակել քաղաքագիտություն և առհասարակ, քաղաքագիտություն՝ լայն (ծավալուն) իմաստով (անգլ. political science), և քաղաքական գիտություններ (political sciences): Քաղաքական գիտության կառուցվածքային հարցերը քննարկելիս լուրջ խնդիրներ են ծագում նաև տարբեր նպատակների կամ դիսցիպլինների կապակցությամբ: Քաղաքագետների մի մասը այդ հետազոտությունները համարում է փոխներթափանցված, կից կամ սահմանային, բայց առանձին դիսցիպլիններ, մյուսները դրանք համարում են ենթադիսցիպլիններ, այսինքն՝ քաղաքագիտության բնագավառին «ենթակա»:

Յուրաքանչյուր գիտություն կարիք ունի իր ձևավորման և զարգացման արդյունքների իմաստավորման: Քաղաքական գիտության կայացման հիմնախնդիրների նկատմամբ վերաբերմունքը, նրա ակունքների վերլուծությունը, ուղղությունների, տեսությունների, մեթոդների և կառուցվածքի վերաբերյալ առկա դիսկուրսներն<sup>1</sup> ու ուսումնասիրությունները նպաստում են ընկալելու ներկա իրողությունները և կանխատեսելու ապագան: Առհասարակ, ընդունված է քաղաքական գիտությունը համարել և՛ հին, և՛ նոր, որի պատմական արմատները տեսնում ենք քաղաքական գիտելիքի անտիկ ավանդույթներում, որոնք խտացված արտահայտված են ամենից առաջ հին հունական խոշորագույն մտածողներ Պլատոնի և Արիստոտելի աշխատություններում: Սակայն և՛ քաղաքական գիտությունը, և՛ սոցիալական այլ գիտություններ, որպես գիտելիքի առանձին բնագավառներ, դասվում են երիտասարդ գիտությունների շարքը, որոնց զարգացումը պայմանավորված էր Եվրոպայում սկսված արդյունաբերական հեղափոխության դարաշրջանով: Ընդունված է, որ քաղաքականությունը սոցիոմի կառուցվածքում այլ գործառնությունների (հասարակության համախմբման, քաղաքական կառավար-

<sup>1</sup> **Դիսկուրս** [ֆր. discours - խոսք, ելույթ<ուշ լատ. discursus - փաստարկ, դատողություն]: Ցանկացած նպատակաուղղված գրավոր արտահայտություն, տեքստ: Ժամանակակից լեզվաբանության և փիլիսոփայության շատ բարդ և դժվար սահմանման ենթարկվող հասկացություններից մեկը, որը տարածված է անգլո-գերմանական մշակույթում: Եվրոպական շատ լեզուներում, ինչպես նաև ռուսերենում, այս բառի համարժեքը չկա: Այն թարգմանվում է որպես խոսք, բառ, տեքստ, դատողություն: Առհասարակ դիսկուրսն օգտագործվում է տարբեր իմաստներով, մի դեպքում՝ որպես իշխանության սուբյեկտների հաղորդակցային փոխազդեցության բնութագրումներից մեկը, որը ցուցադրում է հասարակական կարծիքի կազմավորման ներքին տարբերացված գործընթացը և հասարակական քաղաքական կամքի ձևավորումը, մյուս կողմից, օգտագործելով Յուրգեն Հաբերմասի տերմինաբանությունը, որպես դատողություն՝ վիճաբանելի նորմերի, հարցադրումների, հրապարակային քննարկումների ժամանակ բոլորի հավասար մասնակցության շեշտադրմամբ:

ման, քաղաքական կյանքի ռացիոնալացման, քաղաքական սոցիալակա-  
նացման և այլնի) հետ կատարում է նաև «նպատակային» գործառույթ, այն  
իմաստով, որ հասարակական կյանքի տարաբնույթ խնդիրների լուծումը ո-  
րոշակի նպատակ է հետապնդում: Քաղաքական գիտության զարգացման  
գործընթացում այս մոտեցումն իր որոշակի ազդեցությունն է թողել գոր-  
ծածովող տերմինաբանության վրա այն առումով, որ գործառույթները բնու-  
թագրում են հասարակության վրա քաղաքական ազդեցության հիմնական  
հատկանիշներն ու նպատակները, պայմանավորելով ուսումնասիրման ո-  
րոշակի գիտական ուղղվածությունը: Օրինակ՝ քաղաքականության մեթո-  
դաբանական հիմնահարցերին նվիրված գերմանական գրականությունում  
որպես քաղաքական գիտության հոմանիշներ են գործածվում «քաղաքա-  
կանության տեսություն», «քաղաքական գաղափարների պատմություն»,  
«քաղաքական փիլիսոփայություն» և այլ տերմիններ: Անգլոսաքսոնական  
երկրներում առավել տարածված է «քաղաքական գիտություն» տերմինը,  
Ֆրանսիայում ավելի հաճախ խոսում են քաղաքական սոցիոլոգիայի մա-  
սին: Ռուսաստանում, ԱՊՀ երկրներում, Իսպանիայում և այլուր օգտագործ-  
վում է նաև «քաղաքագիտություն» («политология»), «քաղաքականության  
տեսություն» և այլ եզրույթներ: Կարծում ենք՝ տարբերությունը ոչ այնքան  
անվանման, որքան հեղինակների մեթոդաբանական մոտեցումների և քա-  
ղաքական իրականության ընդգրկումների ու բնութագրումների մեջ է: Այս-  
պիսի դրսևորումներն իրենց պատմական հիմքն ունեն: Քաղաքական գիտե-  
լիքը, տարբեր ժամանակներում չկորցնելով իր առանձնահատկությունը,  
զարգանում էր համաշխարհային հասարակական մտքի պատմությանը  
բնորոշ տարաբնույթ պարադիգմաների հերթափոխմամբ: Այսպես, դարերի  
ընթացքում քաղաքականության ուսումնասիրությունն իրականացվում էր  
զանազան փիլիսոփայական համակարգերի ներսում: Յետևաբար, մինչև  
այժմ էլ քաղաքագետները շատ արժեքավոր նյութեր, դիտարկումներ և վեր-  
լուծություններ կարող են գտնել և՛ անտիկ, և՛ միջնադարյան, և՛ մեր ժամա-  
նակների փիլիսոփայական համակարգերում: Յենց նոր ժամանակներում է  
քաղաքական փիլիսոփայությունը ձեռք բերում ինքնուրույն կարգավիճակ,  
և շատ մտածողներ (Ն. Մաքիավելլի, Թ. Յոբբս, Ջ. Լոկ, Շ. Լ. դը Մոն-  
տեսքյո, Ժ. Ժ. Ռուսո, Է. Բյորք, Ջ. Ս. Միլլ և այլք) սկսում են առանձնահա-  
տուկ հետաքրքրություն դրսևորել քաղաքականության հիմնահարցերի  
նկատմամբ: Քաղաքական գիտության կայացման գործընթացին զուգըն-  
թաց՝ արդեն գոյություն ունեին քաղաքական փիլիսոփայության և քաղա-  
քական տեսության տարբեր պրագմատիստական ուղղություններ (քրիտա-  
նացի փիլիսոփա, սոցիոլոգ, իրավագետ, բարոյագետ և հասարակական  
գործիչ Երեմիա Բենթամի ուտիլիտարիզմը, դասական լիբերալիզմը և  
այլն), որոնք արդեն ընդգծում էին դասական ավանդույթից «քաղաքական  
գիտության» առանձնացումը:

Քաղաքագիտությունը կամ քաղաքական տեսությունը քաղաքական  
համակեցությունում (քաղաքական միությունում, ընկերակցությունում,  
խմբակցությունում, համատեղ կյանքում դրսևորվող հարաբերություններ-  
ում) իշխանության իրացման և բաշխման վերաբերյալ քաղաքական սու-  
բյեկտների և օբյեկտների փոխազդեցությունների, հանրային իշխանության  
ինստիտուտների, հասարակության և անհատների փոխազդեցության միջո-  
ցով իրականացվող քաղաքական հարաբերությունների տեսական-էմպի-

րիկ ճանաչողություն է: Ավելի հակիրճ՝ քաղաքական տեսությունը գիտություն է քաղաքականության մասին: Այդ գիտելիքը կամ գիտությունը ձևավորվեց քաղաքականության՝ որպես մարդկանց կենսագործունեության հատուկ տեսակի և հասարակության յուրահատուկ ոլորտի ծագման և զարգացման չափանիշ: Այսպիսով, քաղաքական տեսություն, քաղաքագիտություն տերմինները կարելի է ներկայացնել որպես պետական կառուցվածքի և հասարակության կառավարման վերաբերյալ ուսմունք, գիտություն, տեսություն:

Ինչպես հայտնի է, սոցիալական գիտությունները ելակետ են ընդունում հետազոտման օբյեկտի, այսինքն՝ ուսումնասիրվող երևույթի և հետազոտման առարկայի համապատասխան տիպի այս կամ այն ասպեկտների, յուրահատուկ բովանդակային գծերի տարբերակումը: Քաղաքագիտության մեջ ավանդական այսպիսի բաժանումն ունի իր էական առանձնահատկությունները, որոնք էլ, իրենց հերթին, արտացոլվում են տվյալ բնագավառի գիտական իմացության կառուցվածքում:

Այսպես, քաղաքականությունը, լինելով համապատասխան երևույթների որոշակի բնագավառ, միաժամանակ կարող է «ներթափանցել» սոցիալական կյանքի այլ բնագավառներ, ընդգրկել հասարակական կյանքի զանազան կողմեր: Քաղաքականության՝ որպես քաղաքական գիտության օբյեկտի բովանդակության մեջ կայուն երևույթների հետ (իշխանության բաշխում, պետության կառավարման գործընթացների շուրջ ձևավորվող երևույթներ, պետության ու քաղաքացիական հասարակության հարաբերություններ և այլն) միշտ ընդգրկվում են նաև միայն դիպվածային առումով քաղաքական նշանակություն ձեռք բերած երևույթներ: Ահա թե ինչու որպես քաղաքագիտության առարկա կարող են դիտվել ինչպես քաղաքականության տարատեսակ ներքին եզրերը (հարաբերությունները, մեխանիզմները, բաղադրատարրերը և այլն), այնպես և նրա արտաքին կապերը հասարակության այլ բնագավառների հետ: Այսպես, օրինակ, տնտեսական հարաբերությունների քաղաքական ասպեկտները, դառնալով քաղաքականության բաղկացուցիչ մաս, միաժամանակ քաղաքատնտեսությանը օժտում են «կից» կամ «սահմանային» քաղաքական դիսցիպլինի կարգավիճակով: Նույն կերպ ձևավորվում է դիսցիպլինների (գիտական առանձին ուղղությունների, ընդ որում՝ ոչ միայն հումանիտար) որոշակի շրջանակ, որը կրում է քաղաքական գիտելիքի դրոշմ: Ներկայացնենք մեկ այլ օրինակ, որտեղ նույնպես ընդգծվում են ամբողջական սոցիումում դրսևորվող հոգևոր և քաղաքական ենթահամակարգերի փոխհարաբերությունների սահմանային բնութագրումները, որտեղ վերջանում է հոգևոր ոլորտը, և սկսվում քաղաքականը: Պարզ է, որ քաղաքական աշխարհի կենտրոնական սուբյեկտը մարդն է: Սակայն մարդը ոչ միայն սոցիալական, քաղաքական և տնտեսական էակ է, այլև միաժամանակ հոգևոր, սոցիոմշակութային, բարոյական և այլ ենթահամակարգերի սուբյեկտ: Կարծում ենք, որ այս ներթափանցումները պայմանավորում են այն հանգամանքը, որ «դիմելով մարդուն»՝ քաղաքագիտությունը ներթափանցում է փիլիսոփայության, էթիկայի, մշակութաբանության, մարդաբանության, հոգեբանության և այլ գիտությունների հետաքրքրությունների բնագավառ, իսկ վերջիններս, իրենց հերթին, քաղաքագիտության բնագավառ: Այս բնագավառների փոխներթափանցման շրջանակներում էլ դրսևորվում և ձևավորվում են առանձին դիսցիպլիններ՝ քաղաքական փիլիսոփայությունը, քաղաքական մարդաբանությունը, քաղաքական հոգեբանությունը, քաղաքական մշակույթը և այլն՝ որպես հետազոտման առանձնահա-

տուկ բնագավառներ, միաժամանակ՝ որպես քաղաքական գիտության առանձին ճյուղեր կամ ուղղություններ ու տեսակներ:

XX դարի 70-ական թթ. ամերիկյան քաղաքագետներ Ֆ. Ի. Գրինստայնը և Ն. Ու. Պոլսբին պնդում էին, որ քաղաքական գիտությունը՝ որպես գիտական դիսցիպլին, չունի հետազոտման ընդգծված առարկա, այն ամորֆ (անձև, անկերպ) է և հետերոգեն (այլատարր)<sup>2</sup>: Հետագայում՝ XX դարի վերջերին, մոտեցումը որոշակիորեն փոխվում է. քաղաքական գիտության համար բնորոշ են դառնում այնպիսի երևույթներ, ինչպիսիք են մասնագիտացումը, հատվածականությունը (ֆրագմենտացիա) և խառնասերումը (հիբրիդացում): Քաղաքական գիտության այդ տարատեսակությունն ավելի ընդգծված որոշվում է կից դիսցիպլինների հետ արդյունավետ գիտական փոխազդեցությամբ: Տարբեր դիսցիպլինների զարգացումը հնարավոր է՝ շնորհիվ զանազան հասարակական գիտությունների մասնագիտացված բնագավառների միջև ստեղծված կայուն կապերի: Գիտական գաղափարների և տարբեր հարցադրումների արդյունավետ փոխանակումը տեղի է ունենում հենց այդ դիսցիպլինների հիբրիդացման (խառնասերման) շնորհիվ: Հիբրիդացման գործընթացի էությունն ամենից առաջ հասկացությունների, տեսությունների, մեթոդների փոխառումներն ու ընկալումներն են:

Մենք հակված ենք այն կարծիքին, որ քաղաքական գիտության և այլ քաղաքական դիսցիպլինների, ինչպես նաև սոցիալական գիտությունների միջև հարաբերություններն ըստ էության տարբեր դիսցիպլինների առանձին առարկայական բնագավառների հարաբերություններ են: Քաղաքական գիտությունների բնագավառում ներկայիս ձեռքբերումները հիմնականում բացատրվում են տարբեր դիսցիպլինների առանձին ուղղությունների հիբրիդացման գործընթացով<sup>3</sup>: Այդ պատճառով էլ քաղաքական գիտության զարգացման պատմությունը և նրա ժամանակակից հիմնահարցերը չի կարելի ներկայացնել այլ դիսցիպլինների ու սոցիալական գիտությունների փոխազդեցությունից դուրս:

Մեր օրերում տարածված է այն կարծիքը, որ քաղաքականության վերաբերյալ միասնական գիտություն ընդհանրապես գոյություն չունի: Քաղաքագիտությունը համարվում է տարբեր քաղաքական դիսցիպլինների ամբողջություն, որոնք միավորված են ուսումնասիրման ընդհանուր օբյեկտով («քաղաքական գիտություններ» եզրույթի<sup>4</sup> կիրառումը պայմանավորված է նաև այս խնդրով): Քաղաքական գիտությունները տարբեր երկրներում կարող են ունենալ ոչ միատեսակ կարգավիճակ՝ տարբեր կերպ ազդելով հասարակական գիտակցության վրա: Եթե նկատի ունենանք քաղաքական գիտությունների ուսումնասիրման ընդհանուր օբյեկտը, ապա, իրոք, կարելի է ենթադրել, որ քաղաքական գիտությունը (քաղաքագիտությունը լայն իմաստով) միասնական է (այսպիսի կարծիք ունեն շատ քաղաքագետներ): Ռուս քաղաքագետ Ա. Ա. Դեգոյարևը առաջարկում է քա-

<sup>2</sup> Տե՛ս **Greenstein F. I., Polsby N. W.** (eds). Handbook of Political Science. Reading (Mass): Addison-Wesley, 1975, էջ 5:


<sup>3</sup> Տե՛ս **Доган М.** Политическая наука и другие социальные науки // Политическая наука: новые направления. М., 1999, էջ 113:

<sup>4</sup> Քաղաքական գիտությունները [տերմինը ներկայացրել է ամերիկացի հոգեբան և քաղաքագետ Յ. Լասսուելը 1951 թ.] կարելի է սահմանել որպես քաղաքականության գիտական ապահովում:

ղաքական կյանքի ուսումնասիրման մի գծապատկեր (տե՛ս գծապատկերը)\*, որտեղ կենտրոնում տեղավորում է քաղաքական տեսությունը՝ այն շրջապատելով այլ քաղաքական դիսցիպլիններով՝ որպես «մասնավոր» քաղաքական գիտություններ, որոնք ուսումնասիրում են քաղաքականության ինչ-ինչ ոլորտներ և դրսևորումներ<sup>5</sup>:

**Գծապատկեր**

**Քաղաքական կյանքը որպես իմացության փոփոխվող օբյեկտ**



Գիտության օբյեկտ –  
հասարակության քաղաքական

Փաստորեն, ներկայացվում է քաղաքականության ընդհանուր տեսության և մասնավոր քաղաքագիտական դիսցիպլինների առարկայական դաշտերի հարաբերակցությունը գիտության օբյեկտի (քաղաքականության ոլորտի) տարբեր դրսևորումների ուսումնասիրություններում: Քաղաքական կյանքի նմանօրինակ ուսումնասիրմանը համամիտ լինելով՝ մենք հակված ենք կարծելու, որ առավել ընդունելի կլինի քաղաքականության տեսությունը դիտարկել որպես ընդհանուր քաղաքագիտական մոտեցում (այն ավանդաբար ընդունված է անվանել քաղաքական գիտություն լայն իմաստով), որն ունի փիլիսոփայական, նորմատիվային ուղղվածություն, և ներառում է զանազան էմպիրիկ քաղաքական վերլուծություններ<sup>6</sup>, որոնց

\* Գծապատկերում թվերը նշանակում են՝ 1-փիլիսոփայություն և 1.1-քաղաքական փիլիսոփայություն, 2-սոցիոլոգիա և 2.1-քաղաքական սոցիոլոգիա, 3-հոգեբանություն և 3.1-քաղաքական հոգեբանություն, 4-պատմություն և 4.1-քաղաքական պատմություն, 5-մարդաբանություն և 5.1-քաղաքական մարդաբանություն, 6-մշակութաբանություն և 6.1-քաղաքական մշակույթ, 7-տնտեսական գիտություն և 7.1-քաղաքատնտեսություն, 8-իրավաբանական գիտություն և 8.1-քաղաքական-իրավական նորմերի և ինստիտուտների տեսություն, 9-քաղաքական ընդհանուր տեսություն, 10-քաղաքական գիտություն (քաղաքագիտություն լայն իմաստով):

<sup>5</sup> Տե՛ս **Дегтярев А. А.** Политическая наука в России: интеллектуальный поиск и реальность. М., 2000, էջ 98:

<sup>6</sup> Այս կապակցությամբ պետք է նշել, որ Արևմուտքի համալսարաններում համագործակցում են երկու ակադեմիական առարկա, որոնք ներկայացվում են որպես քաղաքական տեսության բաղկացուցիչներ՝ քաղաքական փիլիսոփայություն (նորմատիվ քաղաքական տեսություն) և քաղաքական գիտություն (էմպիրիկ քաղաքական տեսություն, Ռուսաստանում ստացած «քաղաքագիտություն» անվանմանը համազոր) [տե՛ս **Алексеева Т. А.** Современные политические теории. Курс лекций. М., 2007, էջ 7:]

համաձայն հասարակական և կյանքի առանձին ոլորտների կապը կարող է ներկայացվել որպես քաղաքագիտական դիսցիպլիններ: Ըստ այդմ էլ թերևս **քաղաքականության տեսությունը** կամ քաղաքագիտությունը (կարելի է օգտագործել նաև «**քաղաքաբանություն**»<sup>7</sup> եզրույթը) դիտարկվում է որպես քաղաքական գիտելիքի ինտեգրատիվային բնագավառ: Խոսքը քաղաքականության ընդհանուր տեսության մասին է, որը քաղաքականությունն ուսումնասիրում է բազմակողմանիորեն՝ որպես ամբողջական առարկա, այսինքն՝ որպես բազմաչափ իրական տարածություն, որպես վերլուծական չափումների ամբողջություն: Կարծում են, որ նմանօրինակ բնութագրումը համահունչ է շատ հետազոտողների՝ ժամանակակից ռուս քաղաքագետներ Ա. Սոլովյովի, Վ. Կոմարովսկու, Վ. Իլյինի, ամերիկյան քաղաքագետ Ջ. Գաննելի և ուրիշների վերլուծություններին: Մենք կարծում ենք, որ Ա. Դեգոյարևի վերլուծությունը ևս ենթադրում է, որ քաղաքականության ընդհանուր տեսությունը հենվում է քաղաքագիտական այլ դիսցիպլինների տեսական ու էմպիրիկ արդյունքների վրա, ընդ որում, դրանց հետազոտման դաշտը և օբյեկտները հատվում են, թեկուզև տեսական և հասկացութային ապարատները նույնական չեն կարող լինել:

Այսպես, Ա. Սոլովյովը կարծում է, որ քաղաքագիտությունը ոչ միայն ուսումնասիրում է քաղաքականության ներքին կազմաբանությունը, այլև տալիս է նրա ամբողջական մեկնաբանությունը՝ ինտեգրելով այլ դիսցիպլինների հետազոտությունների առավել նշանակալի արդյունքները: Հենց այդ պատճառով էլ այն եղել և մնում է քաղաքականության վերաբերյալ գիտական իմացության ամբողջ համակարգի կայուն միջուկը: Եվ որպեսզի ընդգծեն նրա առանձնահատուկ նշանակությունը, սովորաբար տարբերակում են քաղաքական գիտությունը լայն իմաստով, որպես բոլոր քաղաքագիտական դիսցիպլինները միավորող, և քաղաքական գիտությունը նեղ (մասնակի) իմաստով, այսինքն՝ որպես գիտելիքի բնագավառ, որն ամբողջացնում է կյանքի այդ ոլորտի վերաբերյալ տեղեկությունները և ուսումնասիրում նրա ներքին բնութագրումները<sup>8</sup>: Մեկ այլ ռուս քաղաքագետ՝ Վ. Ս. Կոմարովսկին, նշում է, որ քաղաքական տեսության հատուկ կարգավիճակը պայմանավորված է նրանով, որ այն քաղաքականությունն ուսումնասիրում է ոչ թե այլ օբյեկտների հետ ընդհանուր շարքում, ինչպես փիլիսոփայությունը, սոցիոլոգիան, պատմությունը և այլն, այլ որպես հիմնական օբյեկտ, ընդ որում, իր բնութագրման ամբողջությամբ ներկայացվող օրինաչափություններով, որոնք վերաբերում են իշխանության և նրա ազդեցության առնչությամբ կառավարողների և կառավարվողների փոխհարաբերություններին<sup>9</sup>: Ամերիկյան ճանաչված տեսաբան Ջ. Գաննելը ենթադրում է, որ պետք է տարբերել քաղաքական տեսությունը՝ որպես «քաղաքական գիտության հատուկ բնագավառ», և քաղաքականության տեսությունը՝ որպես «առավել ընդհանուր միջդիսցիպլինային կազմավորում»<sup>10</sup>: Քաղաքականության գիտելիքի բնագա-

<sup>7</sup> «Քաղաքաբանություն» հասկացությունը կարելի է կիրառել որպես «քաղաքականության տեսություն», «քաղաքագիտություն» (ռուս քաղաքագետների ներկայացրած «политология») հասկացությունների հոմանիշ:

<sup>8</sup> Տե՛ս Соловьев А. И. Политология: политическая теория, политические технологии. Учебник для студентов вузов. М., 2003, էջ 20:

<sup>9</sup> Տե՛ս Политология. Учебник. М., 2006, էջ 29:

<sup>10</sup> Ганнел Дж. Политическая теория: эволюция отрасли // Вестник Московского ун-та. Серия 12. Социально-политические исследования. 1993, №1, էջ 66:

վառը յուրահատուկ է ներկայացնում Վ. Իլյինը: Ըստ նրա՝ խորունկ քաղաքագիտությունը (глубокая политология)՝ հումանիտական գիտելիքը, համադրում է գիտականությունը և բարձր մարդկայնությունը, որոնցով պայմանավորված են նրա առանձնահատկությունները: Կառուցվածքային առումով այն ընդգրկում է փաստերի, օրենքների, սկզբունքների համակարգը՝ գումարած սահմանափակումների, արգելքների համակարգը: Այսպիսով, գիտելիքի ընդերքում դիտարկվում է ճշմարտությունների և արժեքների ամբողջական մի կառուցահատված, որն, ի տարբերություն այլ սոցիալ-հումանիտար դիսցիպլինների, քաղաքագիտությանը հնարավորություն է տալիս կանխարգելել որևէ նախաձեռնություն: Ստավոր կարողության ոչ մի բնագավառ չի հեղեղվել գիտական քաղաքատարրերի այնպիսի բազմաքանակությամբ, ինչպես քաղաքագիտությունը. այստեղ յուրաքանչյուրն իրեն զգում է մասնագետ և գիտակ<sup>11</sup>:

Քաղաքական երևույթներն ուսումնասիրելիս ընդհանուր տեսության կիրառումը կամ քաղաքագիտության ըմբռնումը լայն իմաստով, որպես քաղաքականության տեսություն, հնարավորություն է տալիս գնահատելու առանձին քաղաքագիտական դիսցիպլինների զարգացման աստիճանը, դրանց իրական ազդեցությունը քաղաքական գիտելիքի կառուցվածքի վրա: Իսկ քաղաքական գիտությունը, որպես այդպիսին, այսինքն՝ նեղ առումով, հնարավորություն է տալիս ընդգծել քաղաքական գիտության ինքնուրույնությունը որպես հասարակագիտության այլ բնագավառների շարքում դասված տեսական դիսցիպլին:

Տարբեր քաղաքական գիտությունների փոխազդեցությունները մշտական գործընթացներ են, որոնց արդյունքը չի կարելի վերջնական համարել այնքան ժամանակ, քանի դեռ փոխառնված նյութը չի ենթարկվել ստուգման այն գիտության շրջանակներում, որի ներկայացուցիչները հետաքրքրված են հարակից (սահմանակից) հասարակական գիտությունների մեթոդաբանությամբ:

Այս ամենից կարելի է եզրահանգել, որ քաղաքագիտությունը գիտելիքը միասնականացնող, համախմբող (ինտեգրատիվային) բնագավառ է, որն ունակ է համակարգել քաղաքական աշխարհի տարատեսակ առարկայական եզրերը այս կամ այն չափով ուսումնասիրող բոլոր դիսցիպլինները: Ժամանակակից ռուս քաղաքագետ Ա. Ի. Սոլովյևը հետևյալ կերպ է ներկայացնում քաղաքականության տեղը աշխարհում որպես քաղաքական գիտությունների համակարգման հիմք՝ քաղաքականություն→առանձին հասարակական երևույթներ և ոլորտներ (տնտեսություն, իրավունք, բարոյականություն և այլն)→բնություն →տիեզերք<sup>12</sup>: Փոխազդելով տիեզերքի, բնության, հասարակության և վերջինիս տարբեր ոլորտների հետ՝ քաղաքականությունը ներկայացնում է իր այն կարևոր արտաքին կապերը, որոնք հիմք են հանդիսանում նրա որոշակի գծերի և եզրերի գիտական արտացոլման առանձնահատուկ ձևերի ծագման համար:

Կարելի է արձանագրել, որ ներկայումս քաղաքագիտությունը, տարբերացման և ինտեգրացման գործընթացներով պայմանավորված, ունի չափազանց տարակազմ բնույթ, իսկ նրա կառուցվածքում ընդգրկված են տասնյակից ավելի դիսցիպլիններ, որոնք արտացոլում են հասարակու-

<sup>11</sup> Стéу Ильин В. В. Политология. Учебник для вузов. М., 1999, էջ 6-7:

<sup>12</sup> Стéу Соловьев А. И. Политология: политическая теория, политические технологии: Учебник для студентов вузов. М., 2003, էջ 18:

թյան և բնության հետ քաղաքականության ունեցած փոխհարաբերության բնորոշ հատկանիշները: Այս առումով քաղաքագետ-հետազոտողների զգալի մասը հակված է ներկայացնելու քաղաքական դիսցիպլինների մի ամբողջ շարք (քաղաքականության տեսություն, քաղաքական անտրոպոլոգիա, քաղաքական հոգեբանություն, քաղաքական սոցիոլոգիա, քաղաքական հաղորդակցություն, քաղաքական աշխարհագրություն, քաղաքական էկոլոգիա, աշխարհաքաղաքականություն, քաղաքատնտեսություն, քաղաքական պատմություն, համաշխարհային քաղաքականության տեսություն և այլն), որոնց հարաբերությունը քաղաքականության հետ և վերջինիս արտացոլման գործընթացը իրացվում է տարբեր չափով ու չափանիշներով: Այս հանգամանքը պայմանավորված է նաև հասարակության քաղաքական կյանքի հետազոտման ժամանակ տարբեր գիտությունների մեթոդաբանության օգտագործմամբ: Վերլուծությունների ժամանակ կարող են զուգակցվել փիլիսոփայական, սոցիոլոգիական, հոգեբանական, պատմական և այլ գիտությունների ճանաչողական միջոցներ ու մեթոդներ: Գերմանացի գիտնական Պ. Նոակը կարծում է, որ քաղաքագիտությունը ձևավորվում է չորս կարևորագույն դիսցիպլիններից: Դրանք են՝ քաղաքական փիլիսոփայությունը կամ քաղաքական տեսությունը, քաղաքական ինստիտուտների մասին ուսմունքը, քաղաքական սոցիոլոգիան, միջազգային քաղաքականության տեսությունը<sup>13</sup>:

Մոտավորապես նմանօրինակ կարծիք է հայտնել ճանաչված իրավագետ-քաղաքագետ Վ. Ս. Ներսեսյանը՝ նշելով, որ քաղաքագիտությունը համակարգող գիտություն է, որը համադրում է վերլուծության երեք մակարդակներ՝ քաղաքական փիլիսոփայությունը կամ արժեքային մակարդակը, քաղաքական տեսությունը, որը սահմանում է քաղաքական համակարգի գործառնության և կազմակերպման հիմնական սկզբունքները, քաղաքական սոցիոլոգիան, որը ստուգում է համակարգերի գործառնության և կազմակերպման համապատասխանությունը նորմատիվային տեսություններին<sup>14</sup>:

Իհարկե, ինչպես արդեն նշեցինք, շատ հետազոտողներ իրավացիորեն չեն սահմանափակվում հիշյալ թվարկումներով: Ժամանակակից ռուս քաղաքագետ Վ. Պուգաչովը քաղաքական գիտությունները բաժանում է երկու խմբի: Առաջին խմբում ընդգրկված դիսցիպլիններն անմիջականորեն ուսումնասիրում են հենց քաղաքականությունը որպես կենսագործունեության ձև: Երկրորդում ներկայացվածները ուսումնասիրում են քաղաքականության և հասարակության ու բնության առանձնահատկությունների փոխադարձ կապը: Առաջին խմբին են դասվում քաղաքական փիլիսոփայությունը (այն չափով, ինչ չափով ուսումնասիրում է քաղաքականության բնույթը և նրա ընդհանուր օրենքները), քաղաքական ինստիտուտների մասին ուսմունքը, միջազգային քաղաքականության տեսությունը, քաղաքական պատմությունը: Երկրորդ խմբում կարող են ընդգրկվել քաղաքական սոցիոլոգիան, քաղաքական հոգեբանությունը, քաղաքական աշխարհագրությունը և քաղաքագիտական այլ դիսցիպլիններ<sup>15</sup>: Այսպիսի

<sup>13</sup> Տե՛ս **Ноак П.** Что такое политика? // Зарубежная политическая наука: история и современность. Выпуск 1. М., 1990, էջ 82:

<sup>14</sup> Տե՛ս "История политических и правовых учений". М., 1983, էջ 38:

<sup>15</sup> Տե՛ս **Пугачев В. П.** Политология. М., 2003, էջ 14:

հիմնավորումների դեպքում, կարծում են, պետք է տարբերակել որոշակի դիսցիպլինի շրջանակներում ընթացող մասնագիտացումը զանազան ենթադիսցիպլինների փոխշփմամբ տեղի ունեցող մասնագիտացումից: Վերջինս հնարավոր է միայն այն դեպքում, երբ օրինական, կայացած դիսցիպլինը զարգացել և հասել է որոշակի մակարդակի: Գիտության պատմության մեջ նշվում է, որ այդ գործընթացն ընթանում է երկու ուղղությամբ: Մի կողմից ընթանում է կայացած դիսցիպլինի ֆրագմենտացիա (հատվածականացում), մյուս կողմից՝ առանձին ոլորտներին համապատասխան կառուցվածքային վերադասավորում: Հետազոտության նոր ուղղությունը, որ ձևավորվել է այդօրինակ խառնասերման (հիբրիդացման) հետևանքով, կարող է կազմել գիտելիքների անկախ ոլորտ, օրինակ, ինչպես դա տեղի է ունենում քաղաքական տնտեսության, քաղաքական մշակույթի և այլնի պարագայում:

Առհասարակ, անհրաժեշտ է նշել, որ այսպես ասած «ընդհանուր» քաղաքագիտության համար կարևոր և ընդգծված հիմնախնդիրներ են մի շարք հետազոտական ուղղությունները: Որոշ քաղաքագետներ հակված են դրանք համարելու սահմանակից, շատ դեպքերում՝ փոխներթափանցված, բայց առանձին դիսցիպլիններ: Այլ հետազոտողներ էլ հակված են դրանք դիտելու որպես ենթադիսցիպլիններ: Այսինքն՝ մի դեպքում քաղաքականության ուսումնասիրությունը ներկայացվում է որպես հարաբերականորեն ինքնուրույն (օրինակ՝ քաղաքական հոգեբանությունը), թեև մասնակիորեն օգտագործվում են քաղաքագիտական տեսական կառուցվածքներ, մեթոդաբանական մոտեցումներ, կատեգորիաներ: Իսկ երկրորդ դեպքում այդ ուսումնասիրությունը ներգրավվում է ենթադիսցիպլինի հասկացություններում (օրինակ, որպես ենթադիսցիպլին կարելի է նշել տարածաշրջանագիտությունը): Որպես չափանիշներ կարող են ընդունվել հետազոտության այս կամ այն բաղադրիչները կամ գիտնականի կողմնորոշվածությունը որոշակի դիսցիպլինի վերաբերյալ: Այսպես, քաղաքական մարդաբանությունը և՛ որպես մարդաբանական դիսցիպլին է, և՛ որպես քաղաքական գիտության ենթադիսցիպլիններից մեկը: Նման օրինակներ կարելի է էլի թվարկել: Որոշ հետազոտողներ (Ջ. Գաննել, Դ. Խելդ, Վ. Ա. Գուտորով, Վ. Ա. Աչկասով և ուրիշներ) կարծում են, որ քաղաքագիտությունը ձեռք է բերել միջդիսցիպլինային բնույթ, որը շատ դեպքերում պայմանավորված է նաև հետազոտողների, գիտնականների կողմնորոշումներով: Այսպիսի դիրքորոշումը հատուկ է մեծ մասամբ այն հետազոտողներին, որոնք ունեն բարձր ստեղծագործական կարողություն, քանի որ նրանք առաջինն են ուշադրություն դարձնում կից տարածությունում առաջացած նոր խնդիրներին: Սակայն, ինչպես նշում է քաղաքական գիտությունների պրոֆեսոր (Կալիֆորնիայի համալսարան, ԱՄՆ) Մատտեի Դոգանը, այս ընդհանուր դրույթը հազվադեպ է իրատեսական լինում: Մեր օրերում դժվար թե որևէ մեկը կարողանա դառնալ բարձր որակավորմամբ մասնագետ մեկից ավելի գիտական դիսցիպլիններում, և ավելորդ կլինի խոսել խորը և բազմակողմանի գիտելիքների մասին<sup>16</sup>: Իհարկե, միջդիսցիպլինային կապերը գոյություն ունեն և լուրջ ազդեցություն են թողնում գիտությունների զարգացման գործընթացների վրա, սակայն պետք է նկատի ունենալ, որ մասնագիտությունների հատվածա-

<sup>16</sup> Տե՛ս Դոգան Մ. նշվ. աշխ., էջ 114:

վորման և խառնասերման փոխկապակցվածությունը, այլ ոչ թե յուրաքանչյուրի մեկուսացված ազդեցությունը հանգեցրեց հաջողությունների ինչպես բնագիտական, այնպես էլ սոցիալական գիտությունների բնագավառներում: Քաղաքական գիտության շրջանակներում շարունակվող կառուցվածքային փոփոխությունները այդ երկու հակոտնյա գործընթացների՝ հատվածավորման և խառնասերման զարգացման արդյունք էին: Իսկ ընդհանրապես միջդիսցիպլինային կապերի ազդեցությունը ներկայումս հասել է զարգացման այնպիսի աստիճանի, որ հանգեցնում է սոցիալական գիտությունների հին դասակարգման ժխտմանը:

**Քաղաքականության տեսությունը** քաղաքականությունն ուսումնասիրում է որպես ամբողջություն, քննարկում է քաղաքականության առավել ընդհանուր հիմքերը և հնարավորությունները հասարակության և մարդու համար դրանց նշանակության համատեքստում: Դա մտավոր ակտիվության այն բնագավառն է, որտեղ մշակվում և քննարկվում են տարաբնույթ գաղափարներ, որոնք վերաբերում են քաղաքականությանը, մտքի պատմությանը, քաղաքական իրականության ելույթին և արժեքներին, նրա վերլուծության մտավոր նախադրյալներին: Քաղաքականության տեսությունը մշակում է քաղաքական երևույթների գնահատման չափանիշները ընդհանուր բարօրության, արդարության, ազատության տեսանկյունից՝ նկատի առնելով արժեքները, նորմերը և կողմնորոշված է դեպի իդեալական քաղաքական կառուցվածքի ձևավորումը:

Այս ամենը ներկայացվում է նաև որպես քաղաքական փիլիսոփայություն կամ նորմատիվ քաղաքական տեսություն: Ի տարբերություն էմպիրիկ գիտությունների, որոնք առաջին հերթին հենվում են դիտարկվող փաստերի վրա, քաղաքական տեսությունը հիմնվում է տեսական ռացիոնալ հետազոտությունների, պատմական փորձի ընդհանրացման, տրամաբանական դատողությունների վրա, թեև չեն բացառվում կոնկրետ փաստերի վերլուծությունները: Քաղաքականության տեսությունը վերլուծում է քաղաքականության ճանաչման եղանակներն ու միջոցները, սահմանում է քաղաքական հասկացությունների, տարբեր հայեցակարգերի իմաստը: Եվ ընդհանրապես տեսական-փիլիսոփայական գիտելիքները կազմում են մարդու աշխարհայացքի և հասարակության քաղաքական մշակույթի միջուկը:

Մենք հակված ենք այն կարծիքին, որ քաղաքականության տեսության ուղորտում առկա են երկու ենթադիսցիպլիններ՝ քաղաքական փիլիսոփայությունը (նորմատիվ քաղաքական տեսություն) և էմպիրիկ քաղաքական տեսությունը, որը զբաղվում է պատճառահետևանքային կապերի բացահայտմամբ, թե ինչպիսի գործոններ (անկախ փոփոխականներ) են հնարավորություն տալիս բացահայտելու այս կամ այն քաղաքական երևույթը: Ներկայումս տարբեր երկրներում (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Ֆրանսիա, Ռուսաստան և այլն) ընթացող քաղաքագիտական հետազոտություններում, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատություններում քաղաքականության տեսությունը ներկայացվում է վերը նշված երկու ակադեմիական դիսցիպլիններով<sup>17</sup>: Իհարկե, հաճախ քաղաքականության տեսությունը և քաղաքական փիլիսոփայությունը օգտագործվում են նաև որպես հոմանիշներ:

---

<sup>17</sup> Стів Мухаев Р. Т. Теория политики: учебник для студентов вузов, обучающихся по гуманитарно-социальным дисциплинам (020000) и специальности "Международные отношения" (350200). М., 2005, тз 8-9, Алексеева Т. А. Современные политические теории. Курс лекций. М., 2007, тз 10-11:

Քաղաքականության տեսությունը գերակա դիրք ունի նորմատիվ քաղաքական վերլուծության բնագավառում և բառացիորեն նշանակում է ուսմունք քաղաքականության մասին: Այն ներկայանում է որպես տեսական դիսցիպլին, որի հանդես գալը և զարգացումը պայմանավորված են մի ամբողջ շարք գիտական դիսցիպլինների՝ քաղաքականության մասին ընդհանրացված գիտական իմացության կուտակմամբ և ժամանակակից գիտությունում ինտեգրատիվ միտումների ամրապնդմամբ:

Ընդունված տեսակետ է, որ մինչև XX դարի սկիզբը գիտական իմացության էվոլյուցիան ընթացել է տարրաբաժանման միտման ազդեցությամբ, որը որոշակիորեն արտահայտվել է առավել մեծ թվով առարկայական բնագավառների և ենթաբնագավառների առանձնացման գործընթացներում, և որոնք էլ, փաստորեն, նպաստել են գիտական դիսցիպլինների և ենթադիսցիպլինների թվի արագ աճին: Ներկայումս, ըստ տարբեր գնահատումների, դրանց թիվը մոտավորապես հինգ հազար է: Յուրաքանչյուրը, բնականաբար, ձևավորում է իր հասկացությունների ապարատը և մասնագիտական բառապաշարը, որը խթանում է ոչ միայն առարկայական բնագավառների, այլև հենց առանձին դիսցիպլինների ներսում ընթացող հատկանիշների տարամիտմանը, ճյուղավորմանը (դիվերգենցիային<sup>18</sup>):

Դիվերգենցիաների ուժեղացումը օբյեկտիվորեն հանգեցրեց գիտական իմացության տարանջատման (դեզինտեգրացիայի) լուրջ վտանգի: Մի դեպքում ինտեգրացման գործառնություններ են տեղի ունենում ընդհանուր գիտական շրջանակներում (օրինակ՝ հասարակագիտության), մյուս դեպքում դրանք ընթանում են որոշակի առարկայական բնագավառներում՝ հանդես գալով որպես առարկայական տեսություններ: Կարծում ենք՝ այս վերջինների թվին կարելի է դասել նաև քաղաքականության տեսությունը:

Ընդհանուր գիտական տեսությունները որոշ իմաստով առարկայորեն ինդիֆերենտ<sup>19</sup> են, քանի որ անմիջականորեն փոխկապակցված չեն ավանդական առարկայական տարրաբաժանման հետ: Դրանց հետազոտման առարկան իրականությանը հատուկ ինչ-որ որոշիչ հատկանիշ է: Նման գիտական դիսցիպլին կարելի է համարել մաթեմատիկական, որը հետազոտում է այնպիսի ընդհանուր հատկություն, ինչպիսին է «քանակը»: Հազարամյակների ընթացքում դա կատարել է համամասնականացման գործառնությամբ բնական գիտությունների ոլորտում:

Յուրաքանչյուր ընդհանուր գիտական տեսության (տեսությունների խմբի) հանդես գալուն նախորդում են համապատասխան ընդհանուր գի-

<sup>18</sup> **Դիվերգենցիա** (լատ. - divergere - տարբերություններ հայտնաբերել, բաժանվել, հեռանալ, ճյուղավորվել, տարրընթանալ, տարատրոհվել): Սոցիալական գիտության կողմից կենսաբանությունից փոխառված հասկացություն: Կենսաբանությունում այս հասկացությունը նշանակում է օրգանիզմների էվոլյուցիայի գործընթացում դրանց կից (մոտ, հարազատ) օրգանիզմների հատկանիշների տարբերություն կամ էլ նախասկզբնական միասնական էվոլյուզիական համակեցության (միության) բաժանում մի քանի նոր ինքնուրույն խմբերի: Քաղաքականության բնագավառում դիվերգենցիան առնչվում է ինստիտուցիոնալ-քաղաքական, սոցիալ-մշակութային, գաղափարաբանական և այլ դրսևորումների որակական տարատեսակության ընդլայնմանը: Դա հանգեցնում է գոյություն ունեցող հարաբերությունների բարդացմանը և նոր համակարգերի դրսևորմանը: Դիվերգենցիան մի հասկացություն է, որը հակադիր է կոնվերգենցիային: Իրականության մեջ դիվերգենցիոն և կոնվերգենցիոն գործընթացները գտնվում են մշտական փոխազդեցության մեջ՝ ապահովելով գոյություն ունեցող ամբողջ հասարակական օրգանիզմի աստիճանական շարժընթացը, կայուն զարգացումն ու գործառնությունը:

<sup>19</sup> **Ինդիֆերենտ** [լատ. indifferens (indifferentis) անտարբեր] անտարբերություն:

տական պարադիգմաների ձևակերպումներ, այսինքն՝ ինչ-որ ընդհանուր հատկության հետազոտման հայեցակարգեր, ինչը ոչ միայն որոշում է գիտական որոնումների ուղղությունը, այլև ձևավորում գիտական մտածողության որոշակի ոճ: Դառնալով գերակշռող՝ նա էական ազդեցություն է գործում մասնագիտական տեսությունների ձևավորման և զարգացման վրա այնքան ժամանակ, քանի դեռ չի ծագել նոր պարադիգմա: Միաժամանակ, նախորդ պարադիգման չնայած դադարում է լինել գերակշռող, բայց մնում է գիտության գինանոցում և շարունակում է զարգանալ: Այսպիսով, ապահովվում է տեսական իմացության բազմակողմանի աճը, որը լրացվում է մասնագիտական տեսություններով, որոնցից յուրաքանչյուրն իր զարգացման ընթացքում նույնպես առանձնահատուկ (առարկայական) պարադիգմաների փոփոխման գործընթաց է:

Մասնագիտական տեսությունների ձևավորումը կարող է տեղի ունենալ երկու տարբեր մակարդակով՝ ներդիսցիպլինային և միջդիսցիպլինային: Առաջին դեպքում չկա ինչ-որ լուրջ փոխառում այլ առարկայական բնագավառներից և՛ ընդհակառակը: Մեր ենթադրմամբ՝ քաղաքականության տեսությունը միջդիսցիպլինային համադրման արդյունք է: Նրա արժանիքը առարկայի, երևույթի վերաբերյալ առավել լիարժեք, համալիր պատկերացում ստանալու հնարավորությունն է: Քաղաքականության տեսությունը լիարժեք տեղ է զբաղեցնում քաղաքականության վերաբերյալ գիտելիքի համակարգում: Հայտնի եռյակ հակադրության՝ համընդհանուրի - առանձնահատուկի-եզակիի շրջանակներում այն կարող է ներկայացնել «առանձնահատուկը»՝ յուրատեսակ կամուրջ դառնալով «համընդհանուրի» (քաղաքական փիլիսոփայության, առավելագույն չափով վերացականի) և «եզակիի» (քաղաքական գիտության, առավելագույն չափով կոնկրետի) միջև:

Այսպիսով, քաղաքականությունը, «ներթափանցելով» սոցիալական կյանքի այլ բնագավառներ, ընդգրկելով հասարակական կյանքի զանազան ոլորտներ, կարող է ստանալ նոր կարգավիճակ, այդ փոխներթափանցումների շրջանակներում դրսևորվելով և զարգանալով որպես առանձին դիսցիպլիններ՝ քաղաքականության տեսություն, քաղաքական հոգեբանություն, քաղաքական սոցիոլոգիա, քաղաքական մշակույթ, քաղաքական անտրոպոլոգիա և այլն, որպես հետազոտման առանձնահատուկ բնագավառներ, որպես քաղաքական գիտության առանձին կողմեր:

**ЛЮДВИГ ВАРДАНИЯН – Структура политической науки: место и роль политической теории в системе политических наук.** – Представляя собой совокупность различных когнитивных (познавательных) процессов и интеллектуальных способов организации полученного знания, наука подразделяется на отдельные отрасли и дисциплины, которые находятся в определенной взаимосвязи друг с другом. Именно в этом смысле развитие истории политической науки и ее современные проблемы нельзя представить вне соотнесения с другими дисциплинами и социальными науками. Политология считается совокупностью разных политических дисциплин, которые связаны между собой единым объектом изучения. В статье политология, или общая теория политики, рассматривается как интеграционная сфера политических знаний.

Обсуждается также место и роль политической теории в системе политических знаний, которая представляет собой наиболее общие основы политики и ее возможности как в отношении общества в целом, так и отдельного человека.

**LUDWIG VARDANYAN – *The structure of political science: the role and the importance of political theory in the system of political sciences.*** – As an outcome of various cognitive processes and intellectual ways of organizing the garnered knowledge, science is subdivided into separate branches and disciplines that are interrelated with each other. In this respect, it seems impossible to consider any advance in the history of political science or any contemporary issue separately from other disciplines and social sciences.

Political science is considered to be the combination of various political disciplines that share a common study objective.

The present paper seeks to consider political science or general political theory as an integrated sphere of political knowledge. Political theory has its own part in the system of political knowledge that shows what principles and opportunities politics may offer both to the society and an individual.